



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 010301000 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 2
ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (covid-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» թիվ 1514-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միխթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը.

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Երաշխավորել տպագրության ներկայացված ուսումնական հետևյալ գրականությունը (կցվում է) (22-02-02-01).

1) Կ.Ս. Պողոսյանի և Ն.Ս. Մելքոնյանի «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում գրիպի և սուր շնչառական վարակների, այդ թվում՝ կորոնավիրուսային հիվանդության, կանխարգելիչ միջոցառումների և վարակի հսկողության առանձնահատկությունները» ուսումնական ուղեցույցը.

2) Մ.Մ. Տեր-Ստեփանյանի, Ա.Ռ. Բադալանի, Ա.Զ. Համբարձումյանի և Գ.Հ. Հովասափյանի «Հումանիտար ճգնաժամ, աղետների բժշկություն, քիմիական ճառագայթային, կենսաբանական, միջուկային պաշտպանություն» ուսումնական նյութը.



3) Լ.Ռ. Ավետիսյանի խմբագրությամբ «Hygiene and Ecology» և «Гигиена и Экология» ուսումնական ձեռնարկները.

4) Ն.Հ. Վանյանի «Լույսը և գույնը ստոմատոլոգիայում» և «Свет и цвет в стоматологии» ուսումնական նյութերը.

2. Հաստատել հետբուհական կրթության լրացուցիչ մասնագիտացման, կրթական ծրագրերը (կցվում են) (22-02-02-02).

1) Զարգացման մանկաբուժություն — մանկաբույժների համար (12 ամիս, 1680 ժամ տևողությամբ և ժամային ծանրաբեռնվածությամբ).

2) Դերմատոպաթոլոգիա — մաշկավեներաբանների համար (12 ամիս, 644 ժամ տևողությամբ և ժամային ծանրաբեռնվածությամբ):

3. Գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 31-ի N 21-03-03-06 որոշմամբ հաստատված Շարունակական մասնագիտական կրթության ուսման վճարների մասին կարգի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով (22-02-02-03).

- զարգացման մանկաբուժություն – 12 ամիս՝ 500000 դրամ.

- դերմատոպաթոլոգիա – 12 ամիս՝ 250000 ՀՀ դրամ

4. Հաստատել՝ «Տնտեսական վարչության գործունեության կանոնակարգը» (կցվում է) (22-02-02-04).

5. Հաստատել «Ամփոփիչ ատեստավորման կանոնակարգը»՝ նոր խմբագրությամբ (կցվում է) (22-02-02-05).

6. Համալսարանի գիտական գործունեությանը աջակցություն ցուցաբերելու համար՝ համաշխարհային գիտության մեջ ունեցած նշանակալի ավանդ ունեցող Նոբելյան մրցանակակիրներ Ադա Յոնաթին, Դեն Շեխտմանին, Էյ-Իչի Նեգիշիին (հետմահու) և Զոն Ռոբին Ուորենին շնորհել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում (22-02-02-06):

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա.Ա. ՍՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ